ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

3 ՄԱՅԻՍԻ
2024 թ.
№ 8 (1124)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Կարոտիս վեմն է Հայոց եղեռնը

Լրացավ Հայոց Ցեղասպանության 109-րդ տարին: Անցնող տարիների հետ փաստերն ու վերապրողների, վկաների հիշողությունները չեն խամրում. ավելին՝ ահագնացող ցավն ավելի է ճնշում մեր ազգային արժանապատվությունը և խորացնում հարցադրումը՝ ինչո՞ւ...

Անգամ թուրք պատմաբան Թաներ Աքչամն է վկայում. «Հայոց Ցեղասպանությունն իսկական ցեղասպանություն է և ոչ թե ջարդ, սպանություն կամ այլ բան: Եթե 1915 թվականի տեղի ունեցածը ցեղասպանություն չանվանենք, այդ դեպքում պետք է ասել, որ ոչ մի ցեղասպանություն չի եղել աշխարհում: Սա է տրամաբանությունը. իրերը պետք է կոչել իրենց անուններով»:

Հայոց եղեռնը իմ հոգու ճիչն է,
Ճախրանքիս բոցն է Հայոց եղեռնը,
Հայոց եղեռնը իմ խղճի տունն է,
Վրեժիս թույն է Հայոց եղեռնը,
Կարոտիս վեմն է Հայոց եղեռնը:

Ու քանի դեռ ցավը մխում է, 1,5 միլիոն անմեղ զոհերի հիշատակին պիտի գրվեն նման բովանդակությամբ բանաստեղծություններ, որ հասու չէ մի բարբարոս ցեղախմբի, որը չսովորեց հարգել հարևան ժողովրդի իրավունքն ու մշակույթը:

Ապրիլի 24-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմը, ռեկտորատի աշխատողները մասնակցեցին Եղեռնի 109-րդ տարելիցին նվիրված քայլերթով այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ ոգեկոչելու 1,5 միլիոն անմեղ զոհերի հիշատակը:

> ***Վնցյալը մոռացողին պատժում է ապագան:***
> **Գարեգին ՆԺԴԵՀ**
>
> Հայոց Ցեղասպանությունն իսկական ցեղասպանություն է և ոչ թե ջարդ, սպանություն կամ այլ բան: Եթե 1915-ին տեղի ունեցածը ցեղասպանություն չանվանենք, այդ դեպքում պետք է ասել, որ որևէ ցեղասպանություն չի եղել աշխարհում: Սա է տրամաբանությունը, իրերը պետք է անվանվեն իրենց անուններով:
>
> ***ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄ***
> ***(թուրք պատմաբան)***

Գիտական խորհրդի նիստում

Մանկավարժական համալսարանում կայացավ Գիտական խորհրդի հերթական նիստը: Ավանդույթի համաձայն՝ բուհի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց ամսվա հոբելյարներին:

Նիստի օրակարգային 1-ին հարցը Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության, Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնների վարիչների ընտրությունն էր:

Առաջադրված թեկնածուներին, գիտական գործունեությունը ներկայացրին Գիտական խորհրդի Հումանիտար մասնագիտությունների գծով հանձնաժողովի նախագահ Գևորգ Թադևոսյանն ու Բնագիտական մասնագիտությունների գծով հանձնաժողովի անդամ Գագիկ Դեմիրխանյանը:

Գիտական խորհուրդը լսեց նաև առաջադրված թեկնածուներին, նրանց առաջարկած ծրագրային դրույթները, պաշտոնավարման նոր ժամանակաշրջանում անելիքները: Փակ գաղտնի քվեարկության արդյունքում՝ Օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնը կշարունակի ղեկավարել առաջադրված միակ թեկնածու, ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ռուբեն Երզինկյանը, իսկ Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնը կզբաղեցնի ներկայիս պաշտոնակատար Էդուարդ Կոկանյանը:

Գիտական խորհրդի անդամները հաստատեցին նաև դոցենտի գիտական կոչման ներկայացված հոգեբանական գիտությունների թեկնածուներ Անի Ավագյանին, Անի Խուդոյանին, Արաքսյա Կաթունյանին, Լիլիթ Վարդանյանին, մանկավարժական գիտությունների թեկնածու Գեղեցիկ Գրիգորյանին, տեխնիկական գիտությունների թեկնածու Արսեն Նադարյանին, Արուսյակ Կոստանյանին: Կերպարվեստի ամբիոնի դոցենտ Սևադա Սարգսյանը ընտրվեց պրոֆեսորի պաշտոնում:

Օրակարգի հաջորդ հարցը՝ Գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման գործընթացը համալսարանում, Գիտական խորհրդում ներկայացրեց Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը:

Պրոռեկտորն ընդգծեց՝ Մանկավարժական համալսարանը, հավատարիմ իր որդեգրած քաղաքականությանը, բազմաթիվ ձեռնարկներ է իրականացնում գիտակրթական ոլորտում՝ ամրագրելով որակական զարգացման շարունակական աճ:

Նա նշեց՝ բուհում գիտահետազոտական աշխատանքներն իրականացվում են տարբեր ուղղություններով, որոնցից մեկն էլ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող ծրագրերի մասնակցությունն է: Մարիամ Իսպիրյանը ըստ տարիների ներկայացրեց Գիտության կոմիտեի կողմից բազային ֆինանսավորման ծրագրերի չափաքանակները, 2023 թվականի ծրագրերը, մինչև 2024-2025 թվականները ֆինանսավորվող 6 թեմատիկ ծրագրեր: Գիտական խորհրդին ներկայացվեց նաև 2025 թվականի համար նպատակային գիտական ծրագրերը:

Գիտության գծով պատասխանատուն կարևորեց բուհում ԲՏՃՄ ոլորտի գե-

➤2

Գիտական խորհրդի նիստում

➢3 րազանցության կենտրոնի հիմնումը՝ ընդգծելով, որ այն միտված է նշված ոլորտի գերժամանակակից լաբորատորիաների հիմնադրմանը՝ ուսուցման գործընթացում դրանց կիրառման հեռանկարային նպատակով:

Գիտաժողովներ, 2023 թվականին կատարված հրատարակումներ, միջազգային գրախոսվող պարբերականներում 2021-2023 թվականներին հրատարակված հոդվածների համեմատական տվյալներ, միջազգային գրախոսվող պարբերականներում հրատարակված հոդվածներ, գիտական հանդեսներ, մասնագիտական խորհուրդների գործունեություն, անդրադարձ գիտական կադրերի ատեստավորման կարգին և այլն. Մարիամ Իսպիրյանն իր զեկույցում անդրադարձավ այս և գիտությանը վերաբերող այլ թեմաների ևս:

Ամփոփմանը պրոռեկտորը ներկայացրեց համալսարանում հետազոտական աշխատանքների արդյունավետության վրա ազդող գործոնների, ՀՊՄՀ-ում հետազոտական գործունեության միջազգայնացման

գործընթացի, ուսանողների հետազոտական գործունեության բարելավմանը միտված պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների, ինչպես նաև ուսանողների հետ անցկացված հարցման արդյունքները:

Գիտական խորհուրդը բուհում գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման գործընթացը համարեց բավարար, որոշեց՝ գործընթացի որակի բարձրացման համար ներդնել հետազոտական աշխատանքի և էթիկայի գնահատման նոր չափանիշներ, գիտահետազոտական գործունեության խրախուսման ընթացակարգեր, հետազոտական աշխատանքի որակի գնահատման ու բարելավման նպատակով իրականացնել մշտադիտարկումներ: Ինչպես նաև կմշակվի պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական կարողությունների մասնագիտական զարգացման, կներդրվի հետազոտական աշխատանքների ինքնատիպությունը ստուգելու և գրագողությունը կանխելու ծրագրեր, տեխնիկական միջոցներ և այլն:

Գիտական խորհրդի նախագահ Սրբուհի Գևորգյանը հորդորեց բուհում ակտիվացնել գիտահետազոտական գործունեությունը:

Ընթացիկ հարցերում Գիտական խորհուրդը հաստատեց ներկայացված 8 թեկնածուական և 1 դոկտորական ատենախոսությունների թեմաներ, 2 թեմաների և ղեկավարների առաջարկվող փոփոխություններ: Նիստում երաշխավորվեց նաև հրատարակման ներկայացված Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Աննա Սարգսյանի՝ «Մտավորականը Զապել Եսայանի վիպագրության մեջ» մենագրությունն ու Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դոցենտ Աննա Հարությունյանի՝ «Հարմոնիա-2» ուսումնական ձեռնարկը:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Մասնագիտական կողմնորոշում Մանկավարժականում

Մանկավարժական համալսարանի Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ ապրիլի 18-ին համալսարանում մեկնարկեց արդեն ավանդական դարձած երկօրյա հանդիպումը հանրապետության դպրոցների բարձր դասարանների աշակերտների հետ՝ ուղղված նրանց մասնագիտական կողմնորոշմանը:

«Մասնագիտական կողմնորոշումե ծրագիրը կազմակերպում ենք ամեն տարի. այն արդեն ավանդական է դարձել: Մասնակցում են հանրապետության տարբեր դպրոցների ուսանողներ: Իրականացնում ենք մասնագիտական կողմնորոշում՝ ներկայացնելով համալսարանի ֆակուլտետները: Ֆակուլտետների ուսանողները տաղավարներում ներկայացնում են տեղեկատվություն յուրաքանչյուր ֆակուլտետի մասին, հանգամանորեն պատմում անցկացվող կրթական ծրագրերի և պրակտիկաների մասին:

Աշակերտներին այսօր կներկայացնենք մեր բուհի միջազգային գործունեության, ինչպես նաև ուսանողների փոխանակման ծրագրերի մասին տեղեկատվություն: Հրավիրել ենք բանախոսների, որոնք կներկայացնեն տարբեր թեմաներով բանախոսություններ, աշակերտների համար կանցկացվեն սեմինարներ, խաղեր: Մտադիր ենք նաև առաջիկայում աշակերտների հետ համատեղ արշավներ կազմակերպել»,-ասում է ՈՒԽ նախագահ Պարույր Գալստյանը:

Համալսարանի 10 ֆակուլտետների ուսանողների ներկայացուցիչները ներկայացնում էին ֆակուլտետներին նվիրված սեղանները, որտեղ հանգամանորեն ծանոթացնում էին յուրաքանչյուր ֆակուլտետի

ուսումնամեթոդական ձեռնարկներին, բուհական դասագրքերին, տեղում մասնագիտական խորհրդատվություն ապահովում:

Հանդիպումը վարում էր ՀՊՄՀ Ուսխորհրդի փոխնախագահ, Սկզբնական կրթության ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Կարինե Ավալյանը: «Այս հանդիպումը բարձրագույն կրթության կարևորության մասին է»,-ասում է Կ. Ավալյանը՝ վստահեցնելով, որ կրթությունն է առաջընթացի, անսահման հնարավորությունների և մեր հասարակության մեջ դրական փոփոխությունների հենարանը:

Հանրակրթական ավագ դպրոցների աշակերտներին ողջունեց ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը. «Մենք աշխարհի ամենակարևոր մասնագիտության կադրերին ենք պատրաստում, որովհետև մյուս բոլոր մասնագետներին պատրաստում են մանկավարժները»,-ասաց պրոռեկտորը: Նա հորդորեց աշակերտներին՝ անկախ նրանից, թե ինչ մասնագիտություն կընտրեն, սիրեն և մեծարեն ուսուցչի մասանագիտությունը:

Վստահ եմ, որ մեր հայրենիքի, պետության զարգացման ու բարգավաճման գրավականը ձեր ձեռքերում է, որը դուք որոշելու եք ձեր մասնագիտության ընտրությամբ, դուք որոշելու եք ձեր արժեհամակարգի ձևավորմամբ, նաև ձեր անձնազոհությամբ:

Պրոռեկտորը վստահեցրեց՝ այս սերունդը կոչված է հզորացնելու մեր երկիրը: Նա ընդգծեց՝ աշակերտների և բոլորի առաջ մեր բուհի դռները միշտ բաց են, առանց տարիքային սահմանափակումների, «բոլորս ունենք մանկավարժի կարիք, որովհետև բոլորս մանկավարժի արդյունք ենք»:

Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի ղեկավար Անահիտ Փանոսյանը խոսեց համալսարանի ուսանողների փոխանակման ծրագրերի մասին, դպրոցականներին ներկայացրեց տեսաշար ՀՊՄՀ ուսանողների արտասահմանյան դասընթացների և հետաքրքիր հանդիպումների մասին:

Հանրային հեռուստաընկերության ծրագրերի և եթերի ապահովման բաժնի պետ, ՀՊՄՀ շրջանավարտ Սոնա Խաչատրյանը խոսեց մեդիագրագիտության առանձնահատկությունների մասին:

Ուսանողական կառույցի ներկայացուցիչներից Նոնա Խաչատրյանը ներկայացրեց ուսանողական կառույցի գործունեությունը, ծրագրերը, իսկ Ժենյա Աբգարյանը՝ Մանկավարժական համալսարանի առավելությունները:

Աշակերտների համար «Կրթության կարևորությունը ժամանակակից աշխարհում» դասախոսությամբ հանդես եկավ կառավարման փորձագետ Դավիթ Մեջլումյանը:

Աշակերտների համար կազմակերպվեցին խաղեր, տրվեցին մրցանակներ:

Երկօրյա աշխատանքային հանդիպումների ընթացքում շուրջ 400 աշակերտ հնարավորություն ունեցավ իրազեկվել մանկավարժական կրթության իրեն հետաքրքրող ֆակուլտետի, մասնագիտությունների ու մասնագիտացումների մասին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Հանդիպում պորտուգալացի գործընկերների հետ

Ապրիլի 22-ին Մանկավարժական համալսարանում հյուրընկալել էին Պորտուգալիայի Ավեյրոյի համալսարանի երկու պրոֆեսորի՝ Իզաբել Կոստային և Մարիա Մաթոսին: Պորտուգալական գործընկերների հետ համագործակցությունը նոր չէ, շարունակական հանդիպումների ու փոխադարձ այցերի ընթացքում քննարկվում են համընդհանուր ներառականությանը վերաբերող տարբեր հարցեր:

Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար, Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ Արաքսիա Սվաջյանը, ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը, Հատուկ կրթության ֆակուլտետի ղեկավարները: Գործնական խոսակցություն ծավալվեց նոր համատեղ ծրագրերի ու նախագծերի իրականացման շուրջ, մասնավորապես համընդհանուր ներառական կրթությանը վերաբերող հարցերի շրջանակում:

Կրթական բարեփոխումների համատեքստում կողմերը քննարկեցին մանկավարժահոգեբանական աջակցության նախագծեր, ըստ երեք տարիքային խմբերի մասնավորապես շեշտադրեցին նախադպրոցական տարիքի երեխաների համար իրականացվող վերականգնողական միջոցառումների ակտիվացման անհրաժեշտությունը:

Պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը խոսեց գիտական ամսագրերում փոխադարձ տպագրության հնարավորությունների, էրազմուս + ծրագրի շրջանակներում համագործակցելու հարցերի շուրջ:

Ըստ առաջիկա ծրագրերի՝ նախատեսվում է մագիստրոսական թեզերի համաղեկավարում էրգոթերապիայի և լոգոպեդիայի բնագավառում, ուսանողների փոխանակում, ինչպես նաև համատեղ հետազոտությունների արդյունքները հոդվածի ձևաչափով կտպագրվեն միջազգային պարբերականում:

ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի և մագիստրոսների առաջ պորտուգալացի պրոֆեսորները նաև հանդես եկան մանկավարժահոգեբանական աջակցությանը, մասնավորապես ընտանիքակենտրոն միջամտությանը և լսողության խանգարում ունեցող երեխաներին վերաբերող բաց դասախոսություններով:

Գիտաժողով՝ «Դատահոգեբանական փորձաքննություն. տեսություն և պրակտիկա» խորագրով

Մանկավարժական համալսարանում անցկացվեց «Դատահոգեբանական փորձաքննություն. տեսություն և պրակտիկա» խորագրով հանրապետական 2-րդ գիտաժողովը, որը կազմակերպել էր ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնը Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի Բժշկական հոգեբանության ամբիոնի և ՀՀ ԱԴ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության հետ համատեղ:

Գիտաժողովին իրենց մասնակցությունն էին բերել ՀՀ Քննչական կոմիտեի, ՀՀ Արդարադատության նախարարության հարկադիր կատարման, Ազգային անվտանգության ծառայությունների, ՀՀ մաքսային ծառայության ներկայացուցիչները, ՀՀ փորձաքննությունների ազգային բյուրոյի փորձարարական խմբի մասնագետները:

Բացման խոսքում ռեկտոր Սրբուհի Գևորգյանը ողջունեց Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի կողմից կազմակերպված հանրապետական գիտագործնական գիտաժողովի անցկացումը՝ հաշվի առնելով նրա հատուկ նշանակությունը՝ դատահոգեբանական փորձաքննության ոլորտում իրականացվող փոփոխությունների, ինչպես նաև միջազգային պրակտիկայի շրջանակում տեղի ունեցող մեթոդաբանական, ընթացակարգային, կառուցվածքային վերանայումների և հիմնարար մոտեցումներ պահանջող խնդիրների համատեքստում: «Այդ առումով շնորհակալություն եմ հայտնում ակադեմիական տիրույթի մեր մասնագիտական ոլորտի ներկայացուցիչներին, որոնք իրենց հոգեբանական, կրթամանկավարժական գործունեությունից զատ, երկար տարիներ ներգրավված են դատահոգեբանական փորձաքննությունների գործընթացում և իրենց լուման են ներդնում այն խնդիրների լուծման գործում, որոնց մասին այսօր հնարավորություն կունենանք համատեղ մտորել և խոսել»,-ասաց ռեկտորը:

Սրբուհի Գևորգյանն ընդգծեց քրեական և քաղաքացիական վարույթներում տարեցտարի աճող հատուկ հոգեբանական գիտելիքների կիրառման անհրաժեշտությունը, գիտաժողովը կարևորելով տեսական և կիրառական գիտելիքների արդիականացման, միջազգային փորձի ուսումնասիրման, փորձագետ-մասնագետների հմտությունների կատարելագործման տեսանկյունից:

Ռեկտորը վստահեցրեց. «Գիտաժողովի ընթացքում քննարկվող խնդիրները կարող են նպաստել օրենսդրության և սոցիալական փոփոխության համատեքստում փորձագետների գործունեության նորարարությունների վերաբերյալ նոր գիտելիքների ձեռքբերմանը և մասնագիտական աճին, իսկ գիտաժողովների մասնակիցներին հնարավորություն կտա ներկայացնել սեփական մասնագիտական փորձառությունն ու նոր գիտելիքներ ձեռք բերել դատահոգեբանական փորձաքննության արդի հիմնախնդիրների ուսումնասիրությունների վերաբերյալ, ինչպես նաև հետաքրքրող թեմաների շուրջ համագործակցել ոլորտի այլ մասնագետների հետ»:

ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուզաննա Պետրոսյանը խոսեց դատահոգեբանական փորձագիտական ոլորտի հետ արդեն յոթ տարվա համագործակցության, գիտաժողովի թեմայի արդիականության, գիտական հարթակում արդի հիմնախնդիրների համատեղ լուծումներ գտնելու հնարավորության մասին:

Դեկանը գիտաժողովի արդիականությունն ընդգծեց «օրենսդրական դաշտում կատարվող փոփոխությունների, ինչպես նաև դատահոգեբանական փորձաքննության տեսական, մեթոդաբանական հիմքերում փորձաքնության իրավասությունը բացահայտելու հնարավորության տեսանկյունից»:

ՀՊՄՀ Ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի վարիչ Լևոն Սարգսյանը գիտաժողովը բացառիկ համարեց՝ այն կարևորելով դատահոգեբանական փորձաքննությունների պրակտիկ փորձառության, հմտությունների, դեպքերի վերլուծությունների և շահագրգիռ կողմերի հետ քննարկման նոր գաղափարների ձևավորման տեսանկյունից:

Ըստ Լ. Սարգսյանի՝ Հայաստանում հոգեբանական փորձաքննությունների և, առհասարակ, դատական փորձաքննությունների ինստիտուտի կայացումը պայմանավորված է փորձագիտական բոլոր կենտրոնների զարգացմամբ: Զեկուցողն ընդգծեց՝ Մանկավարժականը հոգեբանության ոլորտում տասնամյակների փորձառություն ունի ու նաև իր ասելիքը դատահոգեբանական փորձաքննությունների ոլորտում, քանզի հանրապետությունում գործող հոգեբան-փորձագետների մեծ մասը Մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի շրջանավարտներ են:

Ելույթ ունեցավ ՀՀ Քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արսեն Այվազյանը, ով շնորհակալություն հայտնեց նախաձեռնության համար, որը միտված է ոլորտի զարգացմանը: Նա ընդգծեց դատական հոգեբանության մեջ պրակտիկայի և տեսության սերտ փոխկապակցվածությունը, խոսեց հանրապետությունում դատական հոգեբանության զարգացման մասին, քրեական դատավարության նոր օրենսգրքով քրեական դատավարությանը դատական հոգեբանների մասնակցության ներգրավվածության ավելացման մասին: Ելույթ ունեցողն ընդգծեց՝ այսօր այս պատասխանատու ոլորտում պետք է ընդգրկվեն ոչ թե պարզապես հոգեբաններ, այլ այն հոգեբանները, որոնք կառավարության կողմից սահմանված կարգով կանցնեն համապատասխան որակավորում՝ այսպիսով ավելի պրոֆեսիոնալ մոտեցում ցուցաբերելով գործընթացին: Նոր քրեական դատավարության օրենսգրքում առավել ամրագրվել է հոգեբանի դերը այս ոլորտում, հոգեբանին լայն հանարավորություն է տրվել տարբեր առաջարկություններով հանդես գալու քննչական գործողությունների ընթացքում:

Ա. Այվազյանը վստահեցրեց՝ բերված օրինակները փաստում են, որ դատական հոգեբանությունը զարգանում է օրենքի մակարդակով և այս տեսանկյունից և՛ քննիչները, և՛ պրոֆեսորադասախոսական կազմը, և՛ ուսանողները անելիքներ ունեն, որպեսզի օրենսդրական այս ձևակերպումները կյանքի կոչվեն՝ հաշվի առնելով երեխայի շահի պաշտպանությունը:

Ելույթ ունեցավ նաև արդարադատության մայոր, ՀՀ ԱՆ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Ոչ գույքային բնույթի կատարողական վարույթների հատուկ բաժնի պետ Վարդան Մելիքբեկյանը:

Նա ընդգծեց դատահրավական մարմինների համագործակցությունը հոգեբանների հետ՝ առավելագույնս արդարացի և ճիշտ որոշումներ կայացնելու տեսանկյունից:

Հոգեբանների մասնակցությունը գիտաժողովին նա կարևորեց այն համատեքստում, որ վերջիններս հստակորեն կարողանան պատկերացնել, թե փորձաքննության շրջանակներում իրենց առաջադրված հարցերի պատասխանները ինչ հետևանքներ կարող են առաջացնել անձի համար և որքանով են ձևակերպված պատասխանները համադրելի օրենքով առաջադրված պատասխանատվության միջոցների հետ:

Լիագումար նիստում հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կամո Վարդանյանի զեկուցումը սուիցիդների դատահոգեբանական փորձաքննությունների յուրահատկությունների մասին էր: Զեկուցողը խոսեց հիմնահարցի ուսումնասիրության համար դատահոգեբանական փորձաքննություն իրականացնողների կիրառած տարբեր մոտեցումների ու մեթոդների, ինքնասպանության տարբերակների ու դրդապատճառների բացահայտման, երեխաների, անչափահասների, ծերերի ինքնասպանություններին յուրահատուկ մասնագիտական մոտեցման մասին:

Ըստ Կ. Վարդանյանի՝ «դատահոգեբանական փորձագետներին պետք է ներկայացվեն նոր պահանջներ. նրանք պետք է լինեն փորձառու և նեղ մասնագետներ, ինչպես նաև փորձաքննության արդյունքները պետք է կրեն ոչ թե հավանական բնույթ, այլ ձգտեն հաստատական գիտական հիմնավորված վերջնարդյունքի, որը կլինի նոր որակ սուիցիդների դատահոգեբանական փորձաքննության մեջ»:

Հոգեբանական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային» ՊՈԱԿ-ի հոգեբանական փորձաքննությունների բաժնի ղեկավար Ռուբեն Աղուզումցյանի զեկուցումը վերաբերում էր դատահոգեբանական փորձաքննության առանձնահատկություններին:

Նա անդրադարձավ դատահոգեբանական փորձագետի պատրաստմանն ու վերապատրաստմանը, գործընթացի դժվարություններին, միաժամանակ հանդես եկավ հոգեբան-փորձագետների արդյունավետ և հուսալի մասնագիտական գործունեությունն ապահովող համակարգի առաջարկությամբ:

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի Բժշկական հոգեբանության ամբիոնի վարիչ Խաչատուր Գասպարյանի զեկուցումը դատաբժշկական փորձաքննության հիմնախնդիրների մասին էր:

Նա խոսեց ինքնասպանությունների մասին՝ կարևորելով դրանց դրդապատճառները՝ մասնավորապես կանգ առնելով վերջին շրջանում բանակում կատարված ինքնասպանությունների վրա, ինչը խոսում է բանակում ոչ կանոնակարգային միջավայրի մասին:

Խ. Գասպարյանն անդրադարձավ ինքնասպանությունների տարատեսակներին, դրդապատճառներին, դրանց մոտիվացիաներին, ինչպես նաև ընտանեկան գործոններին, նաև «գաղտնազերծեց» ինքնասպանությանն առնչվող գործոնները:

Թեմային վերաբերող քննարկումները շարունակվեցին մասնախմբերում:

Սիլվա ԱՍՐՅԱՆ



«Վլադիմիր Պոզներ.

Սիրտս հայկական կողմում է: Կուզենայի հարցազրույց վերցնել Լեոնարդո դա Վինչիից» գրքի շնորհանդեսը

«...Պոզներյան տեղեկատվական դեղատոմսերն այսօր պետք է ճիշտ ու անկողմնակալ կիրառել, դա միանշանակ է, քանի որ դրանք միշտ ծառայում են հանրության շահերին»,-գրում է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Երիցյանը գրքի վերջաբանում, որը վերնագրված է՝ «Պոզներյան լրագրության սթափ ու հարուստ աշխարհը»:

«Ինձ համար հարցազրույցը լրագրության թագուհին է»:

«Երբ մենք խոսում ենք լրագրության անկախության մասին, հասկանում ենք, որ մեզնից ամեն մեկը որպես լրագրող կախյալ է»:

Ռուսաստանցի հանրահայտ լրագրող, հարցազրուցավար Վլադիմիր Պոզների տողերն են:

Ապագա լրագրողների համար իսկական մասնագիտական նվեր էր Սերգո Երիցյանի հեղինակած «Վլադիմիր Պոզներ. Սիրտս հայկական կողմում է: Կուզենայի հարցազրույց վերցնել Լեոնարդո դա Վինչիից» գրքի հրատարակումը, որի շնորհանդեսին էր նվիրված ապրիլի 19-ին Թեքեյան մշակութային միությունում կազմակերպված հանդիպումը հանրապետության անվանի լրագրողների և առհասարակ մտավորականների հետ: Ցավոք Սերգո Երիցյանը չհասցրեց տեսնել գրքի լույս ընծայումը, որտեղ նա ներկայացրել է Պոզների՝ 2019 թվականի մայիսին Երևանում ունեցած հանդիպումները, նրա հետաքրքիր մտքերը, լրատվամիջոցների հրապարակումները, նաև հարցազրույցները ճանաչված հայերի հետ:

Ընթերցողների համար գրքում նաև տեսանելի է դառնում Պոզներ-Հայաստան կապը, որն սկսվել է Ալեքսանդր Սպենդիարյանի ազգականուհու՝ Վալենտինա Չեմբերջիի հետ նրա ամուսնությամբ:

Հանդիպումը բացում է Թեքեյան մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանը, ով արժևորում է Սերգո Երիցյանի հեղինակած գիրքը, խոսում է Պոզների հայաստանյան վերջին այցի ընթացքում հանդիպումների ու հարցազրույցների մասին, որոնք առաջին անգամ հայերեն թարգմանությամբ ներկայացվում են ընթերցողներին:

Գիրքը բացառիկ կրթական, մանկավարժական է, դա դասագիրք է լրագրողների համար՝ վստահեցնում է Ռուբեն Միրզախանյանը, նաև ընդգծում, որ Սերգո Երիցյանն իրեն հատուկ մոտեցմամբ՝ աշխատասիրությամբ, շատ արժեքավոր աշխատություն ստեղծեց, որն իսկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Ներկաները լսեցին հանրապետության անվանի լրագրողների, գրականության, մշակույթի մարդկանց՝ «Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր Դավիթ Ալավերդյանի, «Գոլոս Արմենիի» թերթի մշակույթի բաժնի մեկնաբան, Թատերական գործիչների միության նախագահի տեղակալ Սոնա Մելոյանի, գրող, գրականագետ, թարգմանիչ Ֆելիքս Բախչինյանի, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ՀՀ մշակույթի նախկին նախարար Արմեն Ամիրյանի, «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր, հրապարակախոս, արվեստագիտության թեկնածու Արամ Աբրահամյանի խոսքը:

«Սերգոն շնորհակալ գործ է արել, նա երախտավոր է,-ասաց Արամ Աբրահամյանը,-մարդ, ով նվիրված էր մեր մասնագիտությանը և կրթության գործին»: Իր մասնագիտական մոտեցումների տեսանկյունից նա ներկայացրեց «վեց դաս Պոզներից»՝ փաստելով՝ այս գիրքը ես կօգտագործեմ իմ վարպետության դասերին:

Արմեն Ամիրյանը խոսեց Սերգո Երիցյանի մարդ տեսակի մասին, ապա արժևորեց տաղանդաշատ լրագրողի հարցազրույցների հատվածներով տաղանդաշատ մեկ այլ լրագրողի մեկնաբանությամբ գիրքը: Արմեն Ամիրյանը վստահաբար ընդգծեց. «Եթե Սերգո Երիցյանի «Կարծիք» հաղորդաշարն այսօր հեռարձակվեր որևէ հեռուստաընկերության եթերով, ապա Սերգոն կլիներ ամենահարուստ հեռուստամարդը՝ բառի ամենահիսկական իմաստով: Ապագայում, Սերգո Երիցյանի ուսանողների աշխատանքային գործունեության մեջ մենք տեսնելու ենք նրա ձեռագիրը, տեսնելու ենք նրան, նրա մեծ սիրտը»:

Գրող, գրականագետ, թարգմանիչ Ֆելիքս Բախչինյանը, ով հայերեն թարգմանել է Պոզների «Հրաժեշտ պատրանքներին» գիրքը և գրել առաջաբանը, խոսեց Սերգո Երիցյանի որակների մասին, ով իր ամբողջ կյանքում մնաց համեստ, ազնիվ, մարդասեր և անհատականություն, Լոռվա աշխարհին նվիրված մարդ:

Ֆելիքս Բախչինյանն առանձնացրեց նաև Սերգոյի՝ 19-20-րդ դարի մեծ հայերի կյանքին՝ մասնավորապես Արամյանցին և Մանթաշյանցին նվիրված ուսումնասիրությունները, նա գտավ անգամ նրանց ժառանգներին:

Ելույթ ունեցողը խոսեց նաև Սերգոյի չինական կապերի և այն մասին, որ նրա շատ ծրագրեր անկատար մնացին:

Սոնա Մելոյանը խոսեց Պոզների մասին՝ որպես իր գործի պրոֆեսիոնալի, հատվածներ հիշեցրեց նրա հարցազրույցներից, հաղորդումներից ու հանդիպումներից: Ներկա հրատարակությունը նա համարեց դասագիրք, հսկայական գիտելիքներով, որովհետև Պոզները քաղաքակիրթ մշակույթի իսկական կրողն էր:

Ելույթ ունեցողը շնորհակալություն հայտնեց հրաշալի գրքի շնորհանդեսի համար՝ փաստելով, որ պրոֆեսիոնալների խոսքն այսօր շատ արդիական է:

«Նման դասագիրքն այսօր մեր բուհերում շատ անհրաժեշտ է,-ասաց Սերգո Երիցյանի ուսանող և գործընկեր, «Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր Դավիթ Ալավերդյանը:- Ինքն էլ փայլուն հարցազրուցավար էր, ակնարկային հարցազրույցի վարպետ»:

«Ինձ համար հարցազրույցը նաև հոգեբանական խաղ է լրագրողի և զրուցակցի միջև, և կարծում եմ՝ Պոզներն էլ է այդպես ընկալում»,-ընդծում է Ա. Ալավերդյանը և ներկայացնում հարցազրույցի տարբեր իրավիճակներ: Իր երախտիքի խոսքն է հայտնում թե՛ հեղինակի արած գործի հանդեպ, թե՛ նաև բոլոր նրանց, ովքեր նպաստել են գրքի լույս աշխարհ գալուն, որովհետև «Պոզների փառքը դեռ շատ երկար է մնալու», և գիրքն իսկապես հարցազրույցների արժեքավոր նմուշ է, որը մենք կօգտագործենք մեր աշխատանքում»:

«Լրագրության ասպարեզի մարդկանց կարող են օգնել նրա հարուստ կենսափորձը և մասնագիտական հավատամքի բաղկացուցիչները… Վլադիմիր Պոզների լրագրողական աշխարհը միշտ լիցքեր է պարունակում, որոնցից կարելի է ոչ միայն սնվել ու դասեր քաղել, այլ նաև կառուցել սեփական լրագրողական աշխարհը, որը չի խախտում համընդհանուր և ոչ մի գրված ու չգրված օրենք ու ավանդույթ». Սերգո Երիցյանի կողմից գրված վերջաբանը յուրօրինակ հղում է գրքի բովանդակությանը, որը հետայսու կդառնա ապագա լրագրողների ու ոլորտի մասնագետների սեղանի գիրքը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ

ՀԻՇԻՐ ԵՎ ԱՊՐԻՐ, ՀԻՇԻՐ ԵՎ ԱՐԱՐԻՐ...

Քառասուն երկար ու ծիգ դարեր են ձգվել այն ժամանակներից, երբ մարդիկ սկսեցին քաղաքներ, ամբարտակներ և բուրգեր կառուցել, բանաստեղծություններ հորինել և նայել աստղերին: Եվ այդ քառասուն դարերի ընթացքում մարդկության հավատարիմ ուղեկիցներն են եղել իմաստությունն ու տգիտությունը, գթասրտությունն ու դաժանությունը: Անանուն մի բաբելոնացի հորինել է սքանչելի ավանդություն այն մասին, թե ինչպես վայրենաբար էնգիդուն կին ճանաչելով՝ դառնում է մարդ... Ինչպես է Գիլգամեշը ձգտել, որ մահը չիշխի մարդկանց վրա, իսկ ասորի տիրակալները, ըմբոշխնելով իրենց կոպիտ ուժը, հրամայել են քարերին փորագրել մարդու արյունը երակներում պաղեցնող պատմությունը՝ ժողովուրդների ոչնչացնելու մասին՝ իբրև սերունդներին մշտնջենապես ավանդվող մի խրատ:

Հավատաքննության զնդաններ...

Բարդուղիմեոսյան գիշեր... Հակաբարեռորոգչականների խարույկներ... Մարդկությունը, հիրավի, անթիվ-անհամար սարսափներ է ապրել: Բայց արդեն անցյալ դարի ավարտին սկսում էր այնպես թվալ, թե այդ ամենի երկար սպասված ավարտը մոտենում է, թե գալիս է եթե ոչ համընդհանուր երջանկության, ապա գոնե համընդհանուր խաղաղության դարաշրջանը:

Բայց դա մոլորություն էր: Երկիր մոլորակի համար սահմռկեցուցիչ մի դաս եղավ Առաջին համաշխարհային պատերազմը, և հենց նույն այդ ժամանակ էլ ծայր առավ մի ողբերգություն, որպիսին մինչ այդ չէր տեսել աշխարհը՝ անզեն մարդկանց, կանանց, երեխաների և ծերունիների սառնարյուն, հետևողական, բարբարոս դաժանությամբ աներևակայելի մի ջարդ: Ոչ թե կույր կատաղության վայրենի մի բռնկում... Ո՛չ... այլ պաղ գլխով կատարված հաշիվ՝ մինչև վերջին մարդը ոչնչացնել աշխատավոր, տաղանդավոր, իմաստուն մի ժողովրդի:

Սասունից մինչև Տեր-Զորի անապատները և Միջագետքի գաղջ ու հոտած ճահճուտները ձգվող վիթխարի տարածքի վրա ծայր առած ողբերգությունը աղերսում էր աշխարհի խիղճը... Բայց շատ քչերին հասավ այդ աղեկտուր ձայնը:

Ի դեպ, դա մեկ ուրիշ ողբերգության չարագուշակ նախազգուշացումն էր, և 20 տարի անց Եվրոպան ինքն ապրեց այդ ողբերգությունը:

Գերմանական ֆաշիստները մարդկության դեմ իրենց հանցագործությունը նախապատրաստելիս հստակորեն գիտակցում էին իրենց գաղափարական (եթե հարմար է այդ բառը տվյալ դեպքում) հոգեհարազատությունը երիտթուրքերի հետ, որոնք 1915 թվականին սկսել էին յոթ տարի շարունակվող մի վայրենաբարո կոտորած՝ առանց հաշվի առնելու զոհերի տարիքն ու սեռը և իհարկե, թքելով հասարակական կարծիքի վրա՝ նրանց լպիրշորեն ոգևորում էր պատմական փաստը. «Այսօր ո՞վ է հիշում հայերի ջարդը»:

Ինչպես մյուս հարցերում՝ Ֆյուրերը սխալվում էր նաև այս դեպքում: Մարդկության խիղճն ու հիշողությունն այնքան էլ տեղի տվող չեն, ինչպես թվում էր նրան: 1915 թվականի ապրիլի 24-ի օրը բոլոր ազնիվ մարդկանց սրտերը առհավետ երիզված են սգո շրջանակով:

Յաթաղանների մոլեգնած խրախճանքի՝ անվերջանալիորեն ձգվող այն օրերին հայերը Եվրոպայի «քաղաքակիրթ» կառավարություններից օգնություն էին խնդրում, բայց այդ օգնությունը այդպես էլ չհասավ... Միայն առանձին մարդիկ արձագանքեցին

➤5

ՀԻԾԻՐ ԵՎ ԱՊՐԻՐ...

➢4 անսահման ցավով ու զայրույթով: Դրանք Եվրոպայի լավագույն մարդիկ էին՝ Մաքսիմ Գորկին, Ռոմեն Ռոլանը, Անատոլ Ֆրանսը, Ֆրիտյոֆ Նանսենը: Իսկ բուրժուական կառավարությունները, որպես ժամանակակից փարիսեցիներ, գերադասեցին միայն կողքից նայել:

Լեռնային կիրճերը լցվեցին դիակներով, և գետերի ջրերը բարձրացան մարդկային արյունից: Եվ հիմա Տեր-Զորի անապատի ավազը գիշերները կայծկլտում է զարհուրելի մի լույսով: Ֆոսֆորի լույսն է: Մարդու ոսկորների մեջ ֆոսֆոր շատ է լինում...

Իսկ թուրքական իշխանությունները, վստահ լինելով, որ պատասխան չեն տալու և չեն պատժվելու, նորանոր հրամաններ էին արձակում հետագա գործողությունների համար:

«Զարդ-աքսոր-սովահարություն» հարահոսը գործում էր անխափան ու առանց դադարի: Վերջերս Երևանում հրատարակվեց «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի ռուսերեն ժողովածուն, որն անհնար է կարդալ՝ առանց սոսկումի: Անհնար է, բայց անհրաժեշտ է կարդալ: Մենք պարտավոր ենք իմանալ այդ ամենը: Պարտավոր ենք իմանալ, հիշել ու չներել:

Գրքում զետեղված 267 փաստաթղթերի մեջ կգտնեք թուրք պաշտոնյա Ռիֆաթի՝ 1915 թվականի տակ գրառված պատմությունը՝ ջարդերն սկսելուց առաջ կառավարական գաղտնի խորհրդակցության մասին: Դոկտոր Նազիմը հայտարարել էր. «Այս անգամ մեր գործողությունները պետք է ունենան հայերի բնաջնջման համատարած բնույթ. պետք է կոտորել բոլորին՝ մինչև վերջին մարդը»:

Մի՛ կասկածեք, այդ դոկտորը իրեն լիակատար հաշիվ էր տալիս, որ կոտորելու են կանանց, ծերունիներին, ծծկերներին... Եվ հաղորդում էր գործընկերներին. «Խնդրում եմ, պարոնա՛յք, մի եղեք այդքան փափկասիրտ ու գթացող, դրանք շատ վտանգավոր ախտեր են»: Իսկ ինչո՞վ էր հիմնավորվում այդ մտագար դոկտորը ցեղասպանության «բարոյականությունը»: Երկու դրդապատճառներով, նախ՝ ազգային շահը՝ «Ես ուզում եմ, որ այս հողերի վրա թուրքը և միայն թուրքը ապրի ու միանձնյա տիրապետի, թող վերանան ոչ թուրք բոլոր տարրերը, որ ազգին էլ նրանք պատկանելիս լինեն», այնուհետև՝ դաժանությունը, որ իբր բնության օրենքն է: Ինչ ապշեցուցիչ նմանություն ֆաշիստական հրեշավոր տեսություններին: Եվ նմանության մեկ ուրիշ ահավոր գիծ էլ դրոշմված թուրքաշխարհակալական և գերմանաֆաշիստական ազգայնամոլական բնույթների միջև այն հեռավոր ժամանակներում ցեղասպանություն իրագործելիս: Պարզվում է, որ թուրք բժիշկները դեռևս 1915 թվականին հայերի համար ստեղծված մահվան ճամբարներում մարդկանց վրա կատարում էին այնպիսի փորձեր, որոնք սովորաբար կատարվում են ճագարների և ծովախոզուկների վրա:

Ի՞նչը կարող էր համեմատվել հայ ժողովրդի ցավի ու վշտի հետ, ժողովուրդ, որ կես տարվա ընթացքում ջարդվել, կես էր դարձել... Իսկ մոլեգնած ամբոխի ճիրաններից մազապուրծ փախստականների տառապանքն ու չարչարա՞նքը...

Այնուհանդերձ, հայ ժողովուրդը տոկաց, դիմացավ... Այն ժողովուրդը, որ աշխարհին տվել է ոչ միայն Այա Սոֆիայի գմբեթը վերակառուցող հանճարեղ ճարտարապետ Տրդատին, ոչ միայն խոշոր բանաստեղծների ու մտածողների՝ Գրիգոր Նարեկացուն, Նահապետ Քուչակին, Սայաթ-Նովային, ականավոր մարդասերների ու գրողների՝ Միքայել Նալբանդյանին, Խաչատուր Աբովյանին, Հովհաննես Թումանյանին, այլև իր հզոր գրկում մեծացրել է հմուտ զորավարների՝ Տիգրանին, Վարդանին, Անդրանիկին: Այդ ամենադժնի տարիներին ընդվզեց հպարտ, ասպետական հայ ժողովրդի դիմադրության ոգին: Աշխարհը ապշահար էր Վանի ու Մուսա լեռան պաշտպանների հերոսականությամբ: Պարզ գյուղացին և դարբինը, ելնելով պաշտպանելու... ոչ թե իրենց տունն ու օջախը, այլ կանանց ու աղջիկների կյանքն ու պատիվը, զենքը ձեռքներին արիաբար ետ մղեցին քանակապես հարյուրապատիկ գերակշռող և լավ վարժեցված, լավ կերած, լավ զինված թուրքական բանակների հարձակումները: Քանզի արդարության համար մարտնչողների արիությունը հազարապատիկ ավելի է, քան անիմաստ ու վայրենի չարությունը: Կարելի է սպանել հերոսական պաշտպաններին, բայց նրանց ծնկի բերել՝ երբեք: Մեծն Տիգրանի ոգին այդ օրերին հառնեց գեներալ Անդրանիկի մեջ, Սասնա Դավթի ու Միհրի ոգին՝ ամեն մի հայի, որը դուրս էր եկել՝ մարտնչելու Սարդարապատի արյունոտ ռազմաճակատում:

Զարհուրելի են հայ ժողովրդի կորուստները, բայցև անմահ է նրա փառքն ու խիզախությունը:

Ապրիլի 24-ին, ամեն անգամ նշելով տարելիցը այն ողբերգության, որը ոչ ոք իրավունք չունի մոռանալու, մենք ձեզ հետ ենք, հա՛յ եղբայրներ: Հայերի սրտերի պես մեր սրտերն էլ է համակում անսահման վիշտը, և ձեզ հետ մենք էլ ենք հպարտորեն բարձրացնում մեր գլուխները՝ հիշելով, որ սևահարյուրյակային ուժերին չհաջողվեց սպանել հայ ժողովրդի հանճարը, որ ստորությունը, ➢6

ՄԻՔԱՅԵԼ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի 18-ին ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դասախոսների և ուսանողների հյուրն էր «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն Միքայել Բադալյանը: Ի դեպ, վերջինս բուհի շրջանավարտ է և նաև դասավանդել է հարազատ կրթօջախում:

«Էթիունիի երկրի խորհրդանշական արքետիպերը» խորագրով դասախոսության ընթացքում պատմաբանն անդրադարձավ «մոռացված» էթիունի կազմավորմանը, որի տարածքում էլ գտնվում է ներկայիս Հայաստանի Հանրապետությունը:

«Քչերը գիտեն էթիունիի մասին, որը Վանի թագավորության ժամանակ հզոր ցեղային համադաշնություն էր: Այս թեման ընկած է իմ՝ վերջին մեկ տարվա գիտական հետազոտությունների առանցքում:

Մենք հաճախ կենտրոնանում ենք Ուրարտուի վրա, բայց մոռանում ենք էթիունին, մինչդեռ պետք է երկուսն իրար համատեքստում քննարկել»,-նշեց Միքայել Բադալյանն ու խոստովանեց՝ ուսումնասիրությունը սկսելու պատճառ դարձավ Եղիշե Չարենցի «Երիր Նաիրի»-ն՝ Ինչքա՜ն, ինչքա՜ն անգամ հարցրել եմ ես ինձ, թե ի՞նչ է, վերջապես Նաիրին»:

Այդ համատեքստում նա անդրադարձավ Նաիրի-էթիունի-Ուրարտու հարաբերությանը, խոսեց հնագիտության մասին և հավելեց, որ այն ոչ թե պեղելու գիտություն է, այլև հիմքում ընկած է կրիմինալիստիկան՝ քրեագիտությունը:

Միքայել Բադալյանը խոսեց նաև վաղ երկաթի, երկաթի դարաշրջաններին բնորոշ առանձնահատկությունների մասին, ներկայացրեց ուշբրոնզ-վաղերկաթեդարյան վերնախավային իրեր. փաստերը վկայում են՝ մեր լեռնաշխարհը հարուստ է եղել հոգևոր ընկալումներով, իսկ մշակութային առումով՝ գոնե միատարր:

Անդրադարձ եղավ նաև կիկլոպյան ամրոցներին, ռազմականացված հասարակությանը, խորհրդանշական իշխանության և պատմագիտության վերաբերյալ մի շարք այլ թեմաների:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան էդգար Հովհաննիսյանը շնորհակալություն հայտնեց Միքայել Բադալյանին հյուրընկալվելու և կարևոր թեման ներկայացնելու համար:

«Սա այն թեմաներից է, որի մասին գիտական նորագույն արդյունքներին պարտադիր է ծանոթանալ: Կրկնակի կարևոր է, որ այն ներկայացնում է դրանով զբաղվող մասնագետը»,-նշեց էդգար Հովհաննիսյանն ու հույս հայտնեց, որ դասախոսությունը արդյունավետ ու հետաքրքիր կլինի ներկաների համար՝ ստեղծելով բանավիճելու և քննարկելու առիթ:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԳՈՒՅՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի սրահում հերթական ցուցահանդեսն էր. ցուցադրվել էր Երևանի Ստեփան Զորյանի անվան N 56 հիմնական դպրոցի սաների 60 աշխատանք:

«Մեր ֆակուլտետում նման ցուցահանդեսներ պարբերաբար են կազմակերպվում, և դա ուրախալի փաստ է. դպրոցականների աշխատանքները ֆակուլտետում պարբերաբար ցուցադրելով՝ միաժամանակ պահպանում ենք կապը հանրակրթական դպրոցների և մեր շրջանավարտների հետ, որոնք նկարչության են դասավանդում և ղեկավարում են նկարչության խմբակներ:

Այս անգամ «Գույների աշխարհ» խմբակի սաների բազմագույն նկարներն են զարդարել Գեղարվեստական կրթության ֆակուլտետի սրահը: Ես հաճելիորեն կընդգծեմ այն փաստը, որ մեր լավագույն շրջանավարտներն են աշխատում դպրոցներում և յուրօրինակ կապ պահպանում հարազատ ֆակուլտետի հետ»,-ասաց ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը:

Ֆակուլտետի շրջանավարտ Մարիա Էլմաջյանը խոստովանում է՝ մեծ պատասխանատվություն է սաների աշխատանքները ներկայացնել այն ֆակուլտետում, որի շրջանավարտն ես, բայց և հպարտությամբ նշեց՝ սիրով է իր սաներին ու նրանց աշխատանքները ներկայացնում հարազատ բուհում:

«Մանուկների աշխատանքներն աչք են շոյում իրենց անկեղծությամբ, իշխողը գույնն է, որը փոխանցում է տրամադրություն՝ բերկրանք տալով յուրաքանչյուրին»,-նկատում է դեկանը: Նա շնորհավորում է ցուցահանդեսի կազմակերպիչներ, դպրոցի խմբակի ղեկավարներ Մարիա Էլմաջյանին ու Նաիրա Պողոսյանին, նաև նրանց սաներին, որոնք իրենց առաջին քայլերով մոտենում են կերպարվեստի գեղեցիկ ու գունեղ աշխարհին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՀԻՇԻՐ ԵՎ ԱՊՐԻՐ...

➢5 կեղծիքը, նենգությունը, չարությունն ու բարբարոսությունը Սարդարապատում ստացան իրենց արժանի հակահարվածը:

Փառք ու պատիվ մարտիկներին, հավերժ հիշատակ անմեղ զոհերին: Ծաղկիր, Հայաստա՛ն, խաղող մշակիր, տներ կառուցիր և աստղային մաքուր երկնքին նայիր Բյուրականի զով բարձունքից: Դեռևս ցավից մխում է քո խոր վերքը՝ զավակներդ սփռված են աշխարհով մեկ: Բայց հավատում եմ, որ կգա օրը, և այդ ցավից էլ հետք չի մնա, և բոլոր հայերը կհավաքվեն իրենց հարազատ հողի վրա և «սփյուռք բառը կմնա միայն պատմական բառարաններում:

Հիշողության ցավն անզոր են ջնջել ոչ միայն 80, այլև 8000 տարիները, քանզի հիշողությունը մարդու ամենամարդկային հատկանիշներից մեկն է: Բայց մեր աչքերի առջև 80 տարի առաջ տեղի ունեցածն այլևս երբեք չի կրկնվելու: Հիշիր և ապրիր: Հիշիր և կառուցիր, ստեղծիր, մեր հարազա՛տ, մեր սիրելի՛ եղբայր, մեր Հայաստա՛ն, հինավո՛ւրց երկիր Նաիրի:

Երբ տասնամյակներ առաջ Գերմանիայի կանցլեր Կոնրադ Ադենաուերը Երուսաղեմում ծնկի եկավ Լացի պարսպի մոտ, դրանով ընդգծեց իր ժողովրդի և նրա ոգու բարոյական վսեմությունը:

Իսկ համայն աշխարհով սփռված հայերը ահա արդեն 80 տարի շարունակ սպասել են այն օրվան, թե երբ թուրքական պետությունը գեթ մի բառ կգտնի արտահայտելու իր զիջման ցավը հայերի ցեղասպանության առթիվ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կայացավ Նյուրնբերգի դատավարությունը, և պատերազմի գլխավոր հանցագործները դատապարտվեցին մահվան՝ կախաղանի միջոցով: Այնինչ, հայ ժողովրդի դահիճները հռչակվել էին Թուրքիայի ազգային հերոսներ:

Գերմանիայի մտավորականությունը մեղադրեց նացիզմը, Գերմանիան Իսրայելին 40 միլիարդ մարկ վճարեց՝ որպես նյութական փոխհատուցում: Ի վերջո, չնայած Գերմանիան հրեաների հայրենիքը չէ, այնուհանդերձ, ցեղասպանության զոհերը և լեռնափախստականները ստացան իրենց բնակության նախկին վայրերը վերադառնալու իրավունք:

Իսկ հայերը ամբողջ 80 տարի թուրքական գրականությունում և մամուլում մի բառ անգամ չգտան 1915 թվականի եղեռնի վերաբերյալ: Ես արդեն չեմ խոսում նյութական փոխհատուցման մասին, թեև մարդու կյանքը անգնահատելի է:

Եվ, վերջապես, Թուրքիան հնարավոր չհամարեց զոհերի սերունդներին իրավունք ընձեռել վերադառնալու իրենց պատմական հայրենիքը՝ Թուրքիա անվանվող Արևմտյան Հայաստան: Նույնիսկ հիմա ծայրահեղական տարրերը պղծում են հայկական գերեզմաններ Ստամբուլում և սպառնում նոր դատաստան տեսնել հայերի հետ: Եվ մի՞թե որպես ժամանակավրիպություն ու պատմական պարադոքս չեն հնչում Հայաստանին պատերազմ հայտարարելու սրբապիղծ սպառնալիքները, որպիսիք կարելի է լսել նույնիսկ կառավարության որոշ հարգարժան անդամների բերանից: Ու այդ ամենը՝ 1915 թվականի հայերի սահմռկեցուցիչ ցեղասպանության 80-ամյա հիշատակի նախօրեին: Եվ այդ ամենը՝ ողբերգական այն բոլոր տառապանքներից հետո, որ բազմաչարչար հայ ժողովուրդն ապրեց 20-րդ հարյուրամյակի վերջին տասնամյակներին. ահավոր երկրաշարժը, որի հարուցած վերքերը տակավին չեն սպիացել, արյունոտ իրադարձությունները Ղարաբաղում, արյուն, արցունք և սով վերջին տարիներին: Այդպես խոսել և նիզակ ճոճել կարող են, ինձ թվում է, միայն այն մարդիկ, ում մոտ տեղի է ունեցել խղճի խավարում: Բայց այդ ամենը վտանգ է ներկայացնում ոչ միայն հայ ժողովրդի համար, այլև այն ժողովրդի համար, որի անունից ծայրահեղականները ագրեսիվորեն սպառնում են պատերազմով:

Սակայն կամենում եմ զգուշացնել՝ աշխարհի բոլոր ողջամիտ և ազնիվ մարդիկ զորավիգ կլինեն բյուրատանջ հայ ժողովրդին: Երբ գերմանական Զոլինգեն քաղաքում սափրագլուխ նեոնացիստները ողջ-ողջ այրեցին մի քանի թուրք վտարանդիների, որքան վրդովվեցին Թուրքիայի կառավարիչները: Իսկ ի՞նչ անեն հայերը, ովքեր այժմյան Թուրքիայում տարագիրներ չեն, այլ տերեր, սակայն դարձյալ ապրում են ահ ու սարսափի մեջ: Հինավուրց հայկական քաղաքներ Կարսն ու Սարիղամիշը, Էրզրումը և Վանը, Մուշն ու Սասունը մնացել են առանց բնիկների, այստեղ ավերել ու ավերում են հայկական եկեղեցիները: Եղեռնը Սումգայիթում, Բաքվում, Ղարաբաղում՝ 1915 թվականի եղեռնի շարունակությունն էր:

Գերության մեջ է նույնիսկ բիբլիական Արարատ լեռը: Բայց մի՞թե ժամանակը չէ, որ դարձյալ՝ արյան ահավոր հեղեղից, արցունքներից և սարսափի հույզերից հետո, Արարատի վերևում՝ մով երկնքում, տեսնենք խաղաղության աղավնուն՝ քնքուշ կտուցին կանաչ ճյուղը՝ կյանքի բանաստեղծական խորհրդանիշը:

Պոեզիան միշտ նրանց հետ է, ովքեր մաքառում են հանուն կյանքի, հանուն ճշմարտության և ազատության:

Լիտվերենից թարգմանեց Ֆելիքս ԲԱԽՉԻՆՅԱՆԸ
1995 թ.

«Հայաստանում ես կարծես տանն եմ»,-ասում է Հայաստանում Սերբիայի դեսպան Տատյանա Պանայոտովիչ-Ցվետկովը

Բանասիրական ֆակուլտետում դասախոսների և ուսանողների հետ կազմակերպված հանդիպումը նվիրված էր հայ-սերբական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին:

Հանդիպմանը մասնակցում էր Հայաստանի Հանրապետությունում Սերբիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Տատյանա Պանայոտովիչ-Ցվետկովը:

Հանդիպումը բացեց ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գալստյանը, ով փաստեց՝ սա հայ-սերբական կապերին նվիրված բազմաթիվ հանդիպումների ծիրում հերթական նախաձեռնությունն է:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՊՄՀ գիտաուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը: Նա ողջունեց Հայաստանում Սերբիայի դեսպան Տատյանա Պանայոտովիչ-Ցվետկովի այցը համալսարան, ապա խոսեց հայ-սերբական 750 տարվա վաղեմություն ունեցող պատմական կապերի, սերբական պատմամշակութային կոթողներում հայկական գործոնի, Սերբիայում ձևավորված հայ համայնքի մասին, որն այսօր շուրջ 350 է, ընդգծելով, որ այստեղ է ապրել նաև Սողոմոն Թեհլիրյանը:

Պրոռեկտորը հանգամանորեն խոսեց հայ-սերբական պատմամշակութային կապերի մասին՝ այդ համատեքստում անդրադառնալով հայ և սերբ ժողովուրդների պատմական անցյալի ու ներկայի ընդհանուր աղերսներին, երեք տասնամյա դիվանագիտական հարաբերություններին: Մ. Իսպիրյանը նաև ընդգծեց Հայաստանում Սերբիայի պատվո հյուպատոս Բաբկեն Սիմոնյանի մեծ դերակատարությունը Հայաստան-Սերբիա հարաբերություններում, այնուհետև մաղթեց հետաքրքիր ունկնդրում և բարի ընթացք:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանը խոսեց հայ-սերբական մշակութային կապերի մասին: Նա փաստեց՝ Հայաստանում Սերբիայի դեսպանը մեծ գործունեություն է ծավալում Բաբկեն Սիմոնյանի աջակցությամբ՝ վերջինիս իրավացիորեն համարելով իմաստուն ու նվիրյալ անհատ, որը յուրօրինակ կամուրջ է հայ-սերբական հարաբերություններում, միաժամանակ անդրադառնալով նրա հրատարակած գրքերի շնորհանդեսներին:

Բանաստեղծ, թարգմանիչ, սերբագետ, Հայաստանի Հանրապետությունում Սերբիայի Հանրապետության պատվավոր հյուպատոս Բաբկեն Սիմոնյանը լուսանկարային անդրադարձով ներկայացրեց հայ-սերբական դիվանագիտական հարաբերությունների 30 տարվա պատմությունը՝ վստահեցնելով՝ դիվանագիտական հարաբերությունները ոչինչ չարժեն, եթե նրանց մեջ ներառված չէ մշակույթը: Այդ համատեքստում վերջինս նկատեց դեսպան Տատյանա Պանայոտովիչ-Ցվետկովի՝ մշակութային կապերի զարգացմանն ուղղված ջանքերը, ապա հաստատեց՝ նա գրչի, գրականության, մշակույթի մարդ է, ում հետ համատեղ տարբեր ձեռնարկներ են իրականացնում:

Հանդիպման ավարտին սրտագին խոսքով հանդես եկավ նաև դեսպան Տատյանա Պանայոտովիչ-Ցվետկովը: Նա ուրախ է, որ 30-ամյա դիվանագիտական հարաբերությունների մասն է կազմում, որ ինքն է Հայաստանում Սերբիայի առաջին դեսպանը: Նրա դիվանագիտական անցյալը կապված է Արևելքի ու Արևմուտքի տարբեր երկրների հետ, բայց Հայաստանն ուրիշ է՝ այստեղ նա կարծես իր տանն է:

Դեսպանը խոսեց երկու երկրների պատմամշակութային կապերի մասին, ընդգծեց նրանց բազմաթիվ դժվարություններով ու դաժանություններով լի անցյալը՝ միաժամանակ անդրադառնալով ներկա մարտահրավերներին, որոնց միջով կրկին անցնում են Սերբիան ու Հայաստանը. «Բայց մենք ուժեղ ենք և համոզված եմ՝ կանենք առավելագույնը մեր ժողովուրդների ու հայրենիքների հզորացման համար»:

Դեսպանն ասաց, որ հանձին հայ ժողովրդի, ձեռք է բերել բազմաթիվ բարեկամներ, որ սիրահարվել է Հայաստանին: Ինքն էլ հրավիրեց՝ տեսնելու իրենց երկրի գեղեցկությունները, նաև փոխանցեց, որ Սերբիայի կառավարությունը տարեկան երկու հայ ուսանողի կհատկացնի կրթաթոշակ Սերբիայի համալսարաններում ուսանելու համար:

Նա առանձնահատուկ նշեց Բաբկեն Սիմոնյանի մեծ դերակատարությունը երկու երկրների գրական-մշակութային կապերի ամրապնդման գործում՝ վստահեցնելով, որ տարվա ընթացքում նրա հետ համատեղ բազմաթիվ միջոցառումներ կկազմակերպեն: Դեսպանը տեղեկացրեց՝ ծրագրել են նաև Հայաստանի բուհերում սերբերենի դասընթացներ կազմակերպել. գործընթացն արդեն ընթացքի մեջ է:

Ժողովուրդներին կապողը մշակույթն է՝ վստահեցնում է Բաբկեն Սիմոնյանը, ով իր կեսդարյա գրական գործունեության ընթացքում իրարից չի տարբերել Հայաստանն ու Սերբիան. «Ես ծնվել եմ Հայաստանում, բայց իմ հոգևոր հայրենիքը Սերբիան է»:

Ապա ներկայացնում է տարբեր տարիների իր գրական հունձքը՝ բազմաթիվ գրքեր, որոնցից առանձնացնում է 2018-ին ռուսալեզու հրատարակությամբ «Մի պտղունց սերբական հող», «Հյուպատոսական գրառումներ» (2023), «Մտորումներ Արարատի առջև» (2024) գրքերը:

Խորհրդանշական էր, որ հանդիպումը բացվեց Սերբիային նվիրված, և ավարտվեց Հայաստանին նվիրված երգերով, որոնց տեքստերի հեղինակը Բաբկեն Սիմոնյանն է:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Բարեգործական այց՝ «Բարև, մենք ենք»

Ապրիլի 18-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսուրայի բաժնի 1-ին կուրսի և Օտար լեզուների ֆակուլտետի 3-րդ կուրսի «Ռուսաց լեզու և գրականություն» բաժնի ուսանողները «Բարև, մենք ենք» բարեգործական ներկայացումով այցելեցին Խարբերդի մասնագիտացված մանկատուն և Մրգավան համայնքի մշակույթի տուն: Առաջին կայանը Խարբերդի մասնագիտացված մանկատունն էր:

«Լարվածություն կա, բայց այն չի բխում մեր ելույթից, այլ նրանից, թե մենք ուր ենք գնում: Այս դեպքում մենք այցելում ենք մանկատուն, որը խիստ պատասխանատվության առիթ է տալիս մեզ»,- իր մտքերը մեզ հետ կիսեց ռեժիսուրայի բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Ասյա Հովհաննիսյանը:

Երեխաները մեծ հետաքրքրությամբ և ուրախությամբ սպասում էին ուսանողներին:

«Մենք մեծ ուրախությամբ ենք պատրաստվել այսօրվա հանդիպմանը, որովհետև մենք գիտակցել ենք, որ գալիս ենք շատ հրաշալի երեխաների մոտ»,- նշեց պրոֆեսոր Աիդա Հովհաննիսյանը:

Մանկատան երեխաները ծափողջույններով դիմավորեցին ներկայացման մուտքը: Բեմի և հանդիսատեսի միջև կար անմիջական շփում, ուսանողները ակտիվ շփման մեջ էին երեխաների հետ: Ներկայացման ընթացքում ուսանողները հանելուկների առաջադրման միջոցով ակտիվորեն շփվեցին երեխաների հետ:

Մանկատան սան Արման Մկրտչյանն ասաց. «Ինձ դուր եկավ ներկայացումը, բովանդակությունն իմաստալից էր, ես հասկացա այդ բովանդակության իմաստը, և ուսանողներն առակներով ցույց տվեցին այն ամենը, ինչ կատարվում է մեր շուրջը»:

Օտար լեզուների ֆակուլտետի «Ռուսաց լեզու և գրականություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Քրիստինա Մանուկյանը նշեց. «Սկզբում շատ լարված էինք, որովհետև չգիտեինք՝ ինչ սպասեինք, բայց երեխաների ձայները, էմոցիաները մեզ տվեցին աննկարագրելի

զգացողություններ, և ինձ թվում է՝ մենք ավելի շատ էմոցիա ստացանք, քան տվեցինք»:

Դրական էներգիայով լի ուսանողները շարժվեցին Արարատի մարզի Մրգավան համայնքի մշակույթի տուն: Դահլիճը լցված էր խինդ ու ծիծաղով, երեխաները երգում և պարում էին ուսանողների հետ մեկտեղ: Վերջում հնչեցին դրական կարծիքներ: Մրգավանի ընտանեկան բուժքույր Անուշ Ներսիսյանը շնորհակալություն հայտնեց հոյակապ միջոցառման համար՝ նշելով. «Ես շատ տպավորված եմ ուսանողների խաղից, նրանք վաղվա մեր բեմի, թատրոնի, կինոյի ապագա դերասաններն են, որոնք ոչնչով չեն տարբերվում պրոֆեսիոնալ դերասաններից»:

Մրգավանի վարչական շրջանի ղեկավար Արտակ Դավթյանը շնորհակալագիր հանձնեց՝ շնորհակալություն հայտնելով պրոֆեսոր Աիդա Հովհաննիսյանին և ուսանողներին:

Ռեժիսուրայի բաժնի 1-ին կուրսի ուսանող Արսեն Սահրադյանը նշեց. «Մեր արվեստանոցի ղեկավարից՝ Աիդա Հովհաննիսյանից ստացել ենք որոշակի լուծումներ և խնդիրներ, որոնք անհրաժեշտ են տարբեր հանդիսատեսի առջև ներկայանալու համար»:

Կազմակերպիչները խոստանում են՝ առջևում սպասվում են նոր ներկայացումներ:

Լիանա ՊԵՏՐՈՍՅԱՆ
Կուլտուրայի ֆակուլտետ Լրագրության բաժնի 1-ին կուրս

Դասարանական համերգ

Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջում ապրիլի 27-ին կայացավ դասարանական համերգ՝ ՀՊՄՀ Երաժշտության ամբիոնի դոցենտ Լիլի Խաչատրյանի և նրա ուսանողների մասնակցությամբ: Համերգը նվիրված էր քոլեջի 100-ամյակին և Լիլի Խաչատրյանի դասախոս Վաչե Ումրշատի հիշատակին:

Ներկաները ըմբոշխնեցին հոգեպարար երաժշտություն՝ դասական երաժշտության կախարդական ու անեզր աշխարհում նորովի բացահայտելով Սկարլատիի, Բախի, Հայդնի, Մետների, Լիստի, Շոպենի, Բրամսի ստեղծագործությունները:

Դահլիճում ներկա գտնվողներին իրենց կատարողական արվեստով մեծ բավականություն պարգևեցին Վաչագան Բդոյանի (Մագիստրատուրա 1-ին կուրս), Աիդա Գևորգյանի (բակալավր 4-րդ կուրս) և Սեդա Օհանյանի (հեռակա բաժնի բակալավր 3-րդ կուրս) կատարումները:

Ուսանողների կատարումներից հետո դաշնամուրի մոտ էր սիրված դասախոս, դոցենտ, դաշնակահար Լիլի Խաչատրյանը, ով համերգներով բազմիցս հանդես է եկել հանրապետության հեղինակավոր դահլիճներում: Շոպենի երկու էտյուդի և երկու մազուրկաների խաչատրյանական մեկնաբանությունները հիացրին դահլիճին՝ փոխանցելով դասական երաժշտական արվեստի հանդեպ սիրո և ջերմության անբացատրելի զգացողություններ:

Համերգն ավարտվեց Ռոմանոս Մելիքյանի երաժշտությամբ և Գյոթեի խոսքերով «Վարդը» ստեղծագործությամբ, որի մեներգով և դաշնամուրային նվագակցությամբ ելույթ ունեցավ Լիլի Խաչատրյանը, իսկ կրկներգին միացավ դահլիճը:

Դասական երաժշտության հանդեպ Լիլիի սերը դրսևորվել է վաղ մանկուց: Երկար տարիներ դասավանդելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում՝ նա սաներին է փոխանցում իր գիտելիքները, հմտություններն ու վարպետությունը՝ համալսարանի տարբեր սերունդների մեջ արմատավորելով սեր դեպի դասական՝ բյուրեղյա մաքրությամբ երաժշտությունը, միաժամանակ նրա ակունքներից բխող անմնացորդ սերը փոխանցելով ուսանողներին ու ձևավորելով դասական արվեստի հանդեպ ճաշակ ու նվիրում:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ուսանողի օրագրից

Եվ ցավը գրկեց հոգիս

Հերոսների հիշատակը հարգելով՝ բացեցին զինվորի անկյունը: Զինվորի անկյունում տարբեր զինվորների նկարներ էին՝ տխուր աչքեր, ցավ ու կարոտ: Այնտեղ կար նաև քո նկարը, քո աչքերի տխրությունը, ցավը, կարոտը, այդ ամենը տեսնելով՝ սկսեցի լաց լինել, ու աչքերիցս թափվեցին աղի արցունքներ: Արցունքներ, որոնց մեջ կար անսահման մեծ կարոտ, ցավ, սեր:

Չէի գիտակցում՝ ինչ եմ զգում, անասելի ցավ էր. սիրտս ճմլվեց: Հիշեցի քո փայլուն աչքերը, մեր հանդիպումը, բազմաթիվ զանգերը, քո ձայնը, քո խոսքերը և սկսեցի դողալ ամբողջ մարմնով, ցավը գրկեց հոգիս, սրտիս ցավը արթնացավ նորից. դիպավ իմ ցավող սրտին:

Ինձ ասում են՝ դու ուժեղ աղջիկ ես, երանի քեզ, որ այդպես սիրել ու սիրում ես, նա քեզ հետ է: Այո, նա ինձ հետ է, ու օրերից մի օր ես նորից կհանդիպեմ նրան ու կգրկեմ ամուր:

Մարդիկ կան, որ չեն էլ հասկանում, թե այդ տեսարանը ինչքան ցավոտ էր ինձ համար, քանի որ հարազատ հոգիս՝ սրտիս սերը կար:

Օրերը չեն անցնում, տարին թվում է դար, երբ սիրելիդ չկա, կողքիդ չէ: Ես պարզապես քեզ գրկել էի ուզում հավերժ, ուզում էի գայիր ու սրբեիր իմ արցունքները: Սակայն, այս ամենին զուգահեռ, ես չեմ մոռանում հոգու կապի մասին, որը կա մեր մեջ. մենք սիրում ենք իրար, ես սիրում եմ քեզ ու հավերժ սպասելու եմ քեզ, ես քո Սեդան եմ, իսկ դու՝ իմ Մոնթեն:

Սիրում եմ քեզ, ցավս անբացատրելի է, այն, ինչ տեսա ու զգացի՝ մտքերս, ապրումներս, զգացմունքներս հանձնեցի գրչին:

Նորից լուռ ես, ես նույնպես լուռ եմ, սակայն աչքերս տխուր ու թախծոտ են, անձայն խոսում եմ, սիրուս մասին միայն դու ես լսում, լսում ես, քանի որ իմ սրտում ես:

Հոգիս ու սիրտս նորից ցավում են, սակայն լուռ տանջվում եմ՝ ոչինչ չխոսելով, հավերժ լռելով: Իմ լուսավոր տղա, իմ սեր, հավատում ու սպասում եմ, մեր սպասված հանդիպմանը, երբ կարոտս կգրկի քեզ, այդժամ կլռեմ ես, կխոսեն մեր սրտերը:

Լռում եմ... լուռ եմ, իմ փոխարեն խոսում է ցաված սիրտս, հոգիս, առանց քեզ ապրած օրերս ու բացակայությունդ, այն, ինչը չեմ կարողանում ներել, ոչ մի արդարացում չեմ գտնում՝ ներելու քո բացակայությունն իմ կյանքում:

Ձեռքիս տաք թեյն է, միայնակ նստած եմ, լապտերը վառվում է, լապտերի լույսը ներս է թափանցում և գեղեցիկ իր լույսը նկարում պատուհանին... Պատուհանից այն կողմ նստած եմ ես, խորհում եմ այն մասին, թե ինչքան լավ կլիներ, երբ քեզ հետ միասին մի գավաթ թեյ ըմպեի, քո գրկի մեջ, ու լապտերի լույսը ներս թափանցեր մեր հոգու մեջ:

Ձեռքիս մեջ տաք թեյը գնալով սառչում է, քանի որ միայնակ եմ՝ առանց քեզ, առանց քո ներկայության:

Աչքերս փակում եմ, ու կարծես լապտերի լույսի հետ մեկտեղ ներս են թափանցում հիշողություններս, այն օրերը, երբ քեզ հետ եմ անցկացրել, քեզ եմ սիրել ու սիրում եմ մինչ հիմա ու կսիրեմ հավերժ: Մի պահ ինձ թվում է՝ աչքերս կբացեմ, աչքերս բացելուն պես կբացվի դուռը, ու կարոտիս հետ միասին ներս կմտնես դու, ամուր կգրկես ինձ, կփարատես հոգուս ցավն ու կյանքս նորից կլցնես քեզնով:

Մարիամ ԽԱՆԳԵԼԴՅԱՆ
Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ

Վահագն ԴԱՎԹՅԱՆ

ՊԱՐՏՔ

Լեռան լանջից նայում եմ քեզ, ե՛լ, Հայաստան, կապույտ հագիր,
Ես քո ամեն առավոտին երազանքի կապույտ եմ պարտք,
Դու՝ քարեղեն իմ առեղծված, իմ քարեղեն ճակատագիր,
Քո քարեղեն տառապանքին որդու գորով ու գութ եմ պարտք:
Գետերդ ի վար, ձորերդ ի վար ուռիներդ են շարվել տրտում,
Քո տրտմության ուռիներին ես քնքշության շոյանք եմ պարտք,
Կատարներիդ լճեր կան լուրթ, ուր քո ոգին է մկրտվում,
Այդ լճերի ծփանքներին ես մաքրության ցոլանք եմ պարտք:
Փլված կամար, վեմ տապալված, եղինջներով բուրող Անի,
Քո այդ փլված կամարներին ես խոյակներ ու սյուն եմ պարտք,
Դար ու դարեր բոցկլտացող հրաշք կանթեղ՝ իմ մայրենի,
Ոսկեղենիկ քո կանթեղին ես յուղի տեղ արյո՜ւն եմ պարտք:
Ես ծունկի եմ իջել հոգնած Դեր-Զորի սև ավազներին,
Բայց զոհերիդ անհայտ ու որբ շիրիմներին դեռ խունկ եմ պարտք,
Սիրտս բացել, բույն եմ տվել քո վիրավոր երազներին,
Տո՛ւն հայրենի, ես քո շեմքին որդիական արցունք եմ պարտք:
Արարատն է նայում հեռվից՝ կրծքին խորունկ վիհը վերքի,
Ես քո ցավին այդ վիհերից վեր ելնելու խոյանք եմ պարտք,
Կապույտի մեջ քո հարության սուրբ հրաշքն է ցոլում, երկի՛ր,
Քո հարության այդ հրաշքին ես ողջակեզ ու կյանք եմ պարտք...

1982 թ.

Հատո ՍԱՀՅԱՆ

Մեր հողը վաղուց խլված,
Մեր տունը վաղուց փլված...
Հող չունենք ու տուն չունենք:
Քար քաշում, քար ենք տաշում,
Քարի հետ կյանք ենք մաշում,
Հենվելու մի սյուն չունենք:
Հետևում խաբկանք ու սուտ,
Առջևում վիհեր են մութ,
Ելք չունենք ու հուն չունենք:
Տղերք կան պինդ, պնդակուռ,
Ում տեսնես՝ մի Սասնա ծռռ...
Ծռեր կան, Սասուն չունենք:
Ամեն մի Դավթի համար
Ունքերը կեռ ու կամար
Մի Խանդութ Խաթուն չունե՞նք:
Հոգնած ու խմած էինք,
Խաբված ու քնած էինք,
Արթնացանք, էլ քուն չունենք :
Փակված ենք անձավի մեջ,
Տապակված մեր ցավի մեջ,
Ցավ ունենք, խնդում չունենք:
Մենք մերը չե՞նք լինելու,
Մեր տերը չե՞նք լինելու,
Մեր ցանած ածուն չունե՞նք:

Ռաֆայել ԴԱՎՈՅԱՆ

ՊԱՏԳԱՄ

(«Ռեքվիեմ» պոեմից)

Ինչպես էլ պատմեմ հեռավոր
Օրերիս տրտմությունն անել,
Կիմանան, որ կյանքիս համար
Մի աշխարհ արյուն եմ քամել:
Խավարում, նստել եմ խավարում
Եվ աստղի, մեծ աստղի դուրս գալուն
Սպասել եմ երկար ու երկար.-
Մի աշխարհ ցավեր կան իմ հոգում,
Սակայն ես չեմ դարձել ցավագար:
Եվ ինչ էլ որ պատմեմ աշխարհին,
Չեմ ուզում, որ հանկարծ ինձ խղճան.-
Կա կյանքիս օրենքը իմաստուն՝
Որ հացին թշնամի չեն լինի,
Չեն լինի հողին դավաճան:
-Իմ երկիր, մի անհուն ճառագայթ
Տանում է քեզ անհունն անվախճան.-
Պարտվել են օրերդ թշնամի,
Մեռել են երգերդ դավաճան:
Ցնծության կրակներ ես վառել,
Իմ մեջ քո հրաշքն է հոլովվում,
Քո հրի հեքիաթով ոգեղեն
Այրում ես ու չես խորովում:
Հեքիաթ են լեռներդ ադամանդ,
Հեքիաթ են քաղաքներդ ոսկի,
Հեքիաթ են անհուն, անվախճան՝
Ծալքերում, ծերպերում խոսքի:
Հեքիաթ ես, հրաշք ես, և ահա
Քո որդոց քո պատգամն անվախճան՝
-Քո հացին թշնամի մի լինիր,
-Մի լինիր քո հողին դավաճան:

1969 թ.

Գոհար ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄԻ՜ ՄՈՌԱՑԻՐ ԻՆՁ

Հայոց Եղեռնի արնահոտ ճամփա,
Մայր ու մանուկը՝ հավքեր բնավեր
Եվ Աստված որպես աչքը փակ վկա...
- Հե՜յ, գյավուր,- գոռաց թունոտ ասկյարը
Արդեն ծերացած հայոց դպիրին,- խոսի՛ր, ասում ես՝
Դու լեզու ունես, որը կհանի օձը իր բնից, թե փորձես լռել,
Կկտրեմ լեզուդ,
Գետը կլցնեմ մոր ու մանուկին:
Եվ օսմանը, որ արյան էր ծարավ, ցանկացավ ծաղրել,
Հռհռաց.
- Պատմիր ա՛յս խոտի մասին...
Գրիչը պոկեց քնքուշ մի թերթիկ, ափի մեջ առավ.
- Աշխարհի բոլոր լեզուներով այս ծաղկի անունը
Տարբեր է հնչում, իմաստը մինչդեռ մեկն է, լոկ մեկը՝
Մի՜ մոռացիր ինձ...
Հի՜ն մատյաններում վաղուց է գրվել,
Երբ Աստված բոլոր
Ծառ ու ծաղկունքին տվեց անուններ,
Մի փոքրիկ ծաղիկ իսկույն մոռացավ՝ իր անունն ի՞նչ էր,
Ու հարցրեց Նրան,
Բարձրյալը ժպտաց՝
Մի՜ մոռացիր ինձ...
Մի ուրիշ, մի մեծ մագաղաթի մեջ, Հոմերից առաջ,
Գրված է սակայն լեզվով Հոմերի, որ ծառ-ծաղկունքի
Հին աստվածուհին անուն շնորհեց ծաղիկներին պերճ,
Սոսկ մեկն անտեսվեց,
Փոքրիկը սակայն վարդերի միջից
Մեղմիվ շշնջաց՝
Մի՜ մոռացիր ինձ...
Եվ գրքերում հին ասվում է՝ մի խենթ աղջիկ սիրածից
Ոչինչ չի ուզել, բացի սեգ ժայռին ծլած ծաղիկից,
Տղան հասել է կատարին լեռան,
Սայթաքել-ընկել ալիքների մեջ վարարած գետի,
Գտել են նրան ծաղիկն ափի մեջ, վերջին խոսքերը՝
Մի՜ մոռացիր ինձ...
Ուրիշ մի լեզվով ուրիշ մի ասքում գրված է՝ մի օր
Երկու ընկերներ բաժանման ժամին
Իրար ծաղիկ են նվիրել միայն,
Պահել են նրանք թանկագին ընծան ու իրար փնտրել
Գտել մեկմեկու, երբ շատ էին ծեր,
Ճանաչել միմյանց արդեն չորացած կապույտ ծաղիկով՝
Մի՜ մոռացիր ինձ...
Քարերին խազված մի պատմություն կա,
Ուր հրեշտակը սիրահարվել է շարմաղ աղջկան,
Ում գլխին բուրյան ծաղկունքով հյուսված պսակ է եղել,
Եվ դրա համար, օ՜, վտարվել է շքեղ Եդեմից...
Աղջիկը սակայն երկրի վրա զօր գիշեր սիրած
ծաղիկն է ցանել,
Ցանել է մինչև դուռը Դրախտի և հրեշտակին
կրկին հանդիպել,
Նրանց դեմ հանկարծ մեկեն բացվել է դուռը Եդեմի,
Եվ երգ է լսվել՝
Մի՜ մոռացիր ինձ...
Պատմում էր դպիրն ու գետի ափից
Մի մեծ փունջ քաղում բուրավետ ծաղկից,
Նվեր էր անում հալածվածներին, մտքում շշնջում՝
Մի՜ մոռացիր ինձ...
Տոչորվածները փոքրիկ ծաղիկը ափերում պահած,
Լուռ քայլում էին՝ ունկն դնելով նրա խոսքերին...
Ու ծալվեց ծունկը ուժերը հատած ծաղկող գրիչի,
Զգաց, որ պիտի լռի պերճ լեզուն,
Քարի պես կախվեց օսմանի վզից ու գետը թռավ,
Երբ սուզվում էին, ժպտալով ասաց՝
Մի՜ մոռացիր ինձ...
Մի մայր էլ իր հետ ալիքին տվեց մի ենիչերի,
Զավակին ձայնեց՝
Մի՜ մոռացիր ինձ...
Քրքջացին հանկարծ հրացանները,
Ընկան... ա՜խ, ընկան գաղթի ճամփեքին
Բյուրավոր անեղծ, անմեղ հոգիներ՝
Աչքերը հառած ամպոտ երկնքին,
Շուրթերին մրմունջ՝
Մի՜մոռացիր ինձ...
Եվ արմանք-զարմանք.
Այնտեղ, ուր ընկան զարնված հոգիք,
Թևավորների երամ հայտնվեց,
Որտեղ, որ նրանց բոբիկ ոտքերի ոտնահետքը կար,
Ծիլ ձգեց ծաղկունք՝ կաս-կարմիր, կապույտ,
ճերմակ թերթերով...
Կարմիրը նրանց թափված արյունն է,
Կապույտը՝ երազն անկատար, փշրած,
Ճերմակը՝ գույնը մաքուր ու անբիծ հեգ հոգիների,
Փետրավորները՝ թև առած հոգիք...
Բիրտ օսմանները զարմանքից պլշած՝
Կոխկրտում էին բացված ծաղիկը, արմատից պոկում,
Մեկի տեղ սակայն
Մեկեն բուսնում էր մի բուրավետ փունջ...
Հրացանները ծաղիկների դեմ անկարող էին...
Հենց այդ օրվանից հյուսիսից հարավ
Եվ արևելքից մինչև արևմուտք,
Ուր ոտքն է դիպել մարտիրոսված ու փրկված հայորդու,
Մինչև Դեր Զորի շեկ անապատը բուսնած ծաղիկը
Դարձավ ԱՆՄՈՌՈՒԿ...
Նրա արմատը ժայռեր է ծակում,
Ու որքան ցավը ուժգին է զգում,
Այնքան զորեղ է տենչը ծաղկելու.
Դա գենն է հայի...
Եվ մինչև այսօր
Անմոռուկները
Եվ ծով-ծովերեն,
Եվ հով-հովերեն
Հուշիկ շշշում են՝
ՄԻ՜ ՄՈՌԱՑԻՐ ԻՆՁ...

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց
խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ